

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՆԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ ՀԱՍԼԵՏԻ

ԼՂՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ

**ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ԺԲ.00.02 «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН АВЕТИК ГАМЛЕТОВИЧ

**АКСИОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КОНСТИТУЦИИ НКР И
ПРОБЛЕМЫ ДАЛЬНЕЙШЕГО РАЗВИТИЯ КОНСТИТУЦИОНАЛИЗМА**

Автореферат

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.02 - «Публичное право – конституционное, административное,
финансовое, муниципальное, экологическое, европейское право,
государственное управление»**

ЕРЕВАН – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Գ. Գ. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան

իրավաբանական գիտությունների
թեկնածու Վ. Վ. Ռաֆայելյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. նոյեմբերի 20-ին ժամը 14³⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2015 թ. հոկտեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ա.Ա.Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:

доктор юридических наук,
профессор Г. Г. Арутюнян

Официальные оппоненты:

доктор юридических наук,
профессор Г. Б. Даниелян

кандидат юридических
наук В. В. Рафаелян

Ведущая организация: Академия государственного управления РА

Защита диссертации состоится 20-го ноября 2015 г., в 14³⁰ часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 20-ого октября 2015г.

Ученый секретарь специализированного
совета, кандидат юридических наук, доцент

А. А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Սահմանադրական զարգացումների արդի հիմնախնդիրների մեջ առանձնահատուկ կարևորվում է Սահմանադրության և նրանում ամրագրված սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների բովանդակության բացահայտումը, ընկալումը և իրական կյանքի կանոն դարձնելը, որը վերջնարդյունքում պետք է նպաստի երկրում սահմանադրականության հաստատմանը: Հասարակական հարաբերությունների սահմանադրականացման հիմնախնդիրների լուծումն առանց Սահմանադրության արժեքանական խոր վերլուծությունների՝ գրեթե անհնարին է¹:

Այս հիմնախնդրին առնչվող տեսական և գործնական շատ հարցեր խորը գիտական վերլուծության ու ընդհանրացման անհրաժեշտություն ունեն: Հիմնախնդիրն առավել հրատապ է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (այսուհետ կրճատ՝ ԼՂՀ), որտեղ սահմանադրական հիմնարար արժեքներն ունեն երկու տասնամյակից ավելի պատմություն, սակայն դրանք հատկապես 2006 թվականի դեկտեմբերի 10-ի Սահմանադրության ընդունումից հետո երբևէ գիտական հետազոտության առարկա չեն դարձել² այն դեպքում, երբ սահմանադրական արժեքները կիսալուծումների ձևով իրենց ամրագրումն են գտնում օրենսդրության մեջ ու գրեթե չեն մարմնավորվում իրավակիրառական պրակտիկայում:

Այս առումով առաջին հերթին հարկ է ուշադրություն դարձնել ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալման հիմնահարցին, որի աստիճանով է պայմանավորված քաղաքացիների կողմից երկրի Հիմնական օրենքի նկատմամբ համարժեք վերաբերմունքի դրսևորումը: Մյուս կողմից անհրաժեշտ է բացահայտել ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները, որը թույլ կտա հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված պետությունների Հիմնական օրենքների հետ համեմատության լույսի ներքո բացահայտել ԼՂՀ Սահմանադրության այն հիմնական արժեքանական գծերը, որոնք կարող են նպաստել մյուս չճանաչված երկրներից շահեկանորեն տարբերվող ժողովրդաիրավական պետության կառուցմանը:

Հարկ է նկատել, որ Սահմանադրության փաստացի առկայությունն ինքնին դեռևս որևէ հարց չի լուծում, քանի դեռ օրենսդրությունն ամբողջապես չի համապատասխանում Սահմանադրությանը, սահմանադրական արժեքները չեն կազմում օրենսդրության միջուկը, իսկ իրավակիրառական պրակտիկան հիմնված չէ Սահմանադրության և դրա արժեքային համակարգի հաշվառմամբ ստեղծված օրենսդրության անշեղ կատարման վրա: Այս տեսանկյունից և՛ Սահմանադրության, և՛ օրենսդրության մեջ առկա են բացեր, որոնք այս կամ այն չափով խոչընդոտում են ներկայիս բովանդակությամբ Սահմանադրության դրույթների իրացմանն ու երկրում իրական ժողովրդաիրավական կարգերի հաստատմանը:

¹ Հարությունյան Գ. Սահմանադրական հիմնարար արժեքների իրացման երաշխիքները պետական քաղաքականության մակարդակում և հասարակական պրակտիկայում // «Օրենք և իրականություն», թիվ 10, հոկտեմբեր, 2008թ., էջ 1:

² ԼՂՀ Սահմանադրության ընդունումից հետո սահմանադրական հիմնախնդիրներին նվիրված առաջին գիտական աշխատանքն իրականացվել է Ա.Գանիբեյանի կողմից, սակայն ոչ արժեքանական տեսանկյունից: Տե՛ս Ա.Գանիբեյան, Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման կարգն ու առանձնահատկությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Ատենախոսություն, Երևան, 2014, 190 էջ:

Թեմայի արդիականությունը կայանում է նաև նրանում, որ սահմանադրական հիմնարար արժեքներն իրենց ուրույն տեղը չեն գտնում սահմանադրական արդարադատության իրականացման ընթացքում, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ դիմող սուբյեկտների պասիվ վարքագծով, դատավորների փորձառության պակասով, առանց երկրի առանձնահատկությունները հաշվի առնելու սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի մոդելի ընտրությամբ, պետության չճանաչվածությամբ ու դրանից բխող մի շարք հանգամանքներով:

Սույն հետազոտությունը փորձ է ուսումնասիրելու երկրի Հիմնական օրենքը, վերլուծելու դրա ընդունումից հետո իրականացված աշխատանքները և, հիմնվելով սահմանադրական արժեքանության վրա, մի կողմից ներկայացնելու ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները, մյուս կողմից՝ նախանշելու այն քայլերը, որոնց իրականացման պարագայում Սահմանադրությունը կդառնա ապրող իրողություն: Ըստ այդմ, սույն ուսումնասիրության շրջանակներում արդիական է ոչ միայն բացահայտել սահմանադրական արժեքանության դերն ու նշանակությունը սահմանադրական զարգացումների գործում, այլև գործնական մոտեցումներ մշակել ԼՂՀ-ում սահմանադրականության ամրապնդման հիմնախնդիրների լուծման առնչությամբ:

Ատենախոսության թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Պայմանավորված այն հանգամանքով, որ ինչպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ու Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ հետխորհրդային գրեթե բոլոր երկրներում սահմանադրական արժեքանության և առանձին վերցրած սահմանադրական արժեքների ուսումնասիրության հարցերը գիտական քննարկման առարկա են դարձել համեմատաբար վերջին ժամանակներում, հիշատակված հիմնահարցերի վերաբերյալ նոր ու համընդգրկուն գիտական վերլուծությունների անհրաժեշտությունն էլ ավելի է մեծանում հատկապես միջազգային ճանաչման ձգտող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մի շարք հեղինակների, մասնավորապես՝ Ն.Ա.Այվազյանի, Ս.Ա.Ավագյանի, Մ.Վ.Բագլայի, Ն.Ս.Բոնդարի, Գ.Բ.Դանիելյանի, Ա.Կ.Եսայանի, Ա.Գ. Երիցյանի, Վ.Դ.Զորկինի, Վ.Ն.Ժուկովի, Վ.Ի.Կրուսի, Գ.Գ.Հարությունյանի, Հ.Ա.Հաջիկի, Օ.Վ.Մարտիշինի, Ն.Կ.Նենովսկու, Վ.Ս.Ներսեսյանցի, Վ.Ե.Չիրկինի, Հ.Մ.Ստեփանյանի, Ա.Գ.Վաղարշյանի և այլոց աշխատությունները:

Ատենախոսության նորմատիվային իրավական հիմք են հանդիսացել ինչպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտասահմանյան մի շարք պետությունների Սահմանադրությունները, սահմանադրական դատարանների մասին օրենքները, սահմանադրական դատարանների որոշումները և այլ նորմատիվ իրավական ակտեր, ԼՂՀ պետական արխիվում, ԼՂՀ Նախագահի, Ազգային ժողովի, Գերագույն դատարանի սահմանադրական պալատի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արխիվներում առկա նյութերը, որոնց վերլուծության և համադրության արդյունքում բացահայտվել են քննարկվող հիմնահարցերի լուծման վերաբերյալ մոտեցումները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է հանդիսանում «սահմանադրական արժեքանության» բովանդակության, ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալումների և առանձնահատկությունների

բացահայտումը, սահմանադրական արժեքների շրջանակի հստակեցումը, դրսևորման աստիճանը և դրանց դերակատարությունը սահմանադրական արդարադատության իրականացման ու երկրում սահմանադրականության հաստատման գործում:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել «արժեքի» և «իրավական արժեքանության» հասկացությունների սահմանման վերաբերյալ առկա մոտեցումները, վեր հանել արժեքի հատկանիշները և դասակարգել իրավական արժեքներն՝ ըստ խմբերի,

- բացահայտելով «սահմանադրական արժեքանության» էությունը՝ փորձել տալ դրա հնարավոր ամբողջական սահմանումը,

- բացահայտել ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալումներն ու առանձնահատկությունների հիմնական բնութագրիչները,

- հետազոտել ԼՂՀ Սահմանադրության և օրենսդրության մեջ «իրավունքի գերակայության» ամրագրվածության հարցն ու գործնական առաջարկություններ ներկայացնել դրա լուծման վերաբերյալ,

- ժողովրդաիշխանության իրացման տեսանկյունից ուսումնասիրել հանրաքվեի նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը և մշակել այդ իրավունքի իրացման միասնական մոտեցում,

- վերլուծել «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքը և ներկայացնել առաջարկություններ տվյալ ինստիտուտի գործառնության արդյունավետության բարձրացման ուղղությամբ,

- բացահայտել ԼՂՀ Սահմանադրության մեջ ամրագրված իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի դրական ու բացասական կողմերը և առաջարկել պետությանը ներհատուկ լուծման ուղիներ,

- ուսումնասիրել ԼՂՀ Սահմանադրության, իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի միջև առկա հակասությունները և առաջարկել դրանց հաղթահարման եղանակները,

- բացահայտել սահմանադրական արդարադատության գործունակությանը խոչընդոտող հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման հնարավոր տարբերակներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում սահմանադրաիրավական այն հարաբերությունները, որոնք դրսևորվում են սահմանադրական արժեքների ձևավորման, նորմատիվային ամրագրման և իրավակիրառական գործընթացներում: Հետազոտության առարկա են հանդիսանում այն սահմանադրաիրավական և օրենսդրական նորմերը, որոնք վերաբերում են սահմանադրական արժեքանությանը, Սահմանադրության և օրենսդրության մեջ ամրագրված կամ դրանց բովանդակությունից ենթադրվող սահմանադրական արժեքներին ու դրանց իրացման հիմնահարցերին:

Ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության աղբյուրներից հատկապես կարելի է առանձնացնել հետևյալները.

- 1) «Սահմանադրական արժեքանություն», «սահմանադրական արժեք» և «սահմանադրականություն» հասկացությունների գիտական իմաստավորմանը նվիրված հայրենական և արտասահմանյան աշխատությունները,

- 2) ընդհանուր փիլիսոփայական և իրավափիլիսոփայական գրականությունը,

3) իրավական ակտերը, մասնավորապես՝ հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող ներպետական ու արտասահմանյան նորմատիվ ակտերը, ԼՂՀ և օտարերկրյա սահմանադրական դատարանների իրավական ակտերը:

Աշխատությունում համամասնորեն կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական (համակարգային վերլուծության, վերլուծության և համադրության, ինդուկցիայի և դեդուկցիայի և այլն), այնպես էլ հատուկ գիտական մեթոդներ: Մասնավորապես, աշխատության մեթոդաբանության առանցքն է կազմել համեմատական-իրավական մեթոդը, որի օգնությամբ բացահայտվել ու համեմատական զուգահեռներ են անցկացվել տարբեր պետությունների Սահմանադրություններում և օրենսդրություններում իրավական լուծումների և ձևավորված պրակտիկայի միջև:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ 2006թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ Սահմանադրության ընդունումից հետո սա առաջին համալիր հետազոտությունն է, որում բացահայտվել են ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները, սահմանադրական հիմնարար արժեքների տեղն ու դերը միջազգային հանրության կողմից դեռևս չճանաչված երկրում սահմանադրական արդարադատության իրականացման ու սահմանադրականության հաստատման գործում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առաջին անգամ գիտական հետազոտության առարկա է դարձել օրենսդրության մեջ սահմանադրական արժեքների իրացման հիմնախնդիրը: Փաստական նյութի համակողմանի ուսումնասիրության հիման վրա հիմնավորվել է, որ առանց օրենսդրության մեջ համարժեք փոփոխություններ և լրացումներ կատարելու անհնար է իրավական, ժողովրդավարական պետության հիմնարար սկզբունքների և իրավունքի գերակայության իրացումը:

Փորձ է արվել բացահայտել «սահմանադրական արժեքանություն» հասկացության բովանդակությունը և մշակվել է դրա ընդհանուր բնորոշումը, հստակեցվել օբյեկտը, սուբյեկտը և առարկան: Աշխատանքում համակողմանի ուսումնասիրվել են պետության հռչակման օրվանից հիմնարար իրավական փաստաթղթերում սահմանադրական արժեքների ձևավորման ու ամրագրման հարցը, ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատություն գործառնության և ներկայիս վիճակի հետ կապված հիմնախնդիրները, բացահայտվել սահմանադրական արդարադատության գործունակությանը խոչընդոտող հանգամանքները և ներկայացվել գործնական առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ:

Գիտական որոշակի նորույթ են բովանդակում նաև սահմանադրական և օրենսդրական նորմերի ուսումնասիրության արդյունքում փոփոխություններ կատարելու հիմնավորումներն ու կոնկրետ առաջարկությունները, ինչպես նաև ներկայացվող հավելվածները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Հետազոտության նպատակների և խնդիրների իրականացման արդյունքում ձևավորված գիտական եզրահանգումների հիման վրա պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրագիտության հիմնախնդիրներով զբաղվող գիտնականների մոտ առկա չէ միասնական համալիր մոտեցում «սահմանադրական արժեքանություն» հասկացության բնորոշման վերաբերյալ՝ Հեղինակի կողմից փորձ է արվել տալ վերջինիս սահմանումը, ինչպես նաև հստակեցնել օբյեկտի, սուբյեկտի և առարկայի հետ կապված հարցերը:

2. ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկություններից առաջինն այն է, որ Սահմանադրության հիմքում ընկած արժեքները ոչ թե ներմուծված են, այլ ամրագրվել են պետության կազմավորման առաջին իսկ տարիներին ընդունված Հռչակագրերում և օրենքներում:

Չճանաչված պետությունների սահմանադրական իրավակարգավորումների համեմատությունը թույլ է տվել վեր հանել ԼՂՀ Սահմանադրության արժեքանական մի շարք առանձնահատկություններ, որոնք վերաբերում են չճանաչվածության հանգամանքին, ճանաչված ու չճանաչված պետություններին ոչնչով չզիջող արժեհամակարգին, միջազգային պայմանագրերին ու միջազգային իրավունքի նորմերին հետևելու պատրաստականությանը, Սահմանադրության մեջ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները որպես բարձրագույն արժեք սահմանելուն և այլն:

3. Եթե ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման առումով գոնե կիսալուծում առկա է, այսինքն այն ենթադրելի է որոշ հոդվածների վերլուծությունից, ապա նույնը չենք կարող ասել օրենսդրության առումով, որտեղ որպես սկզբունք ամրագրված է օրենքի գերակայությունը: Իրավունքի գերակայության վերաբերյալ միանշանակ մոտեցում և պատկերացում ձևավորելու նպատակով առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայությունն ամրագրել բառացիորեն, օրենսդրության մեջ տալ դրա բնորոշումը և սահմանել որպես սկզբունք, իսկ գործադիր իշխանության կողմից մշակել և ընդունել դրա իրացման գործնական հայեցակարգ:

Իրավունքի գերակայության իրացման տեսանկյունից կարևոր է, որպեսզի այն ընկալվի ու գիտակցվի քաղաքացիների կողմից: Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձվի իրավական մշակույթի բարձրացմանն ու իրավական դաստիարակության արմատավորմանը:

4. ԼՂՀ Սահմանադրությամբ նախատեսված չէ հանրաքվեի անցկացում ժողովրդական նախաձեռնությամբ: Ուսումնասիրելով մի շարք երկրների փորձը և դրա հետ համադրելով ԼՂՀ-ում սահմանադրական կարգավորումների առանձնահատկությունները՝ կարծում ենք, որ Արցախում ժողովրդական նախաձեռնությամբ հանրաքվեի անցկացման համար Սահմանադրությամբ պետք է սահմանվի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 10 տոկոսից ոչ պակասի ստորագրությունների առկայության պահանջը:

Հանրաքվեի նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը ԼՂՀ Սահմանադրության բովանդակությանը համապատասխանեցնելու նպատակով առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության մեջ կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխությունների կատարման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակն ընդլայնել՝ նման հնարավորություն տալով նաև ժողովրդական նախաձեռնությամբ անցկացմանը, օրենսդրական հանրաքվեի սուբյեկտների շարքում ներառել Նախագահին և ժողովրդին, իսկ պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ անցկացվող հանրաքվեի սուբյեկտների շարքին դասել նաև ժողովրդին:

5. Հաշվի առնելով «տեղական հանրաքվեին» տրված բնորոշման ոչ հստակ ու ամբողջական լինելը և սահմանման մեջ օգտագործված որոշ բառակապակցությունների առումով հստակություն մտցնելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է «Տեղական

հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածում կատարել ներկայացվող փոփոխությունները:

«Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում անորոշ է այն հարցը, թե կոնկրետ ի՞նչ հարցեր կարող են դրվել տեղական հանրաքվեի, դրա փոխարեն 2-րդ մասում թվարկվում են այն հարցերը, որոնք չեն կարող դրվել հանրաքվեի: Հետազոտության շրջանակներում այս կապակցությամբ ներկայացվում են կոնկրետ առաջարկություններ օրենքում առկա բացը լրացնելու ուղղությամբ:

Առաջարկվում է նաև ընդլայնել տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ինչպես նաև ԼՂՀ-ում ներդնել քաղաքացիների ժողովի ինստիտուտը, որի շնորհիվ հնարավոր կլինի տեղական նշանակության հրատապ հարցերին սեղմ ժամկետներում տալ լուծում և ավելի ակտիվացնել համայնքի ղեկավարի և ավագանու գործունեությունը:

6. ԼՂՀ Սահմանադրության 61 հոդվածի 3-րդ մասով ամրագրված Նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու և օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու իրավակարգավորման շրջանակներում բաց է մնում այն հարցը, թե ի՞նչ եղանակով, կառուցակարգով կամ ինստիտուտի միջոցով է Սահմանադրությամբ իրեն վերապահված այդ լիազորություններն իրականացվում: Այս խնդրի լուծման ուղղությամբ առաջարկվում է ԼՂՀ Նախագահի աշխատակազմում կամ Նախագահին առընթեր ստեղծել մասնագիտացված ստորաբաժանում, որն էլ կապահովի Նախագահի՝ տվյալ ոլորտում գործունեության անխաթար իրականացումը:

7. Քաղաքական կայունության ու ժողովրդավարության գրավականներից մեկը կլինի այն, որ Սահմանադրությամբ Նախագահին լիազորություն վերապահվի հաղթահարելու այն արգելքը, որն առաջանում է վարչապետի թեկնածությունն Ազգային ժողովի կողմից երկու անգամ մերժվելու դեպքում: Այս առումով անհրաժեշտ ենք համարում ԼՂՀ Սահմանադրության մեջ կատարել հետազոտության մեջ առաջարկվող փոփոխությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼՂՀ Սահմանադրությամբ կարգավորված չէ Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունելուց հետո վարչապետի կողմից Հանրապետության Նախագահին Կառավարության հրաժարականի մասին դիմումի ներկայացման գործընթացի հետ կապված հարաբերությունները, առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ մասում կատարել լրացում:

Օրենսդրական նախաձեռնության իրացման ոլորտում իշխանության երեք թևերի միջև հավասարակշռության պահպանման նպատակով առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության 90-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ նման իրավունք վերապահելով նաև ԼՂՀ Գերագույն դատարանին:

8. Վերլուծության ենթարկելով ԼՂՀ Սահմանադրության 6-րդ գլուխն ու «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքը, ակնհայտ է դառնում, որ ԼՂՀ Գերագույն դատարանը նույն կազմով երկակի գործառույթ է իրականացնում. մի կողմից սահմանադրական արդարադատություն, իսկ մյուս կողմից վճռաբեկության կարգով վերանայում է ստորադաս ատյանների դատական ակտերը: Այս իրողությունը հաշվի առնելով՝ առաջարկվում է, որ սահմանադրական արդարադատությունն իրականացվի առանձին կազմով, որի դեպքում օրինակելի կարող է համարվել

Ավստրիայի մոդելը, որը ենթադրում է կոնկրետ գործերով պահեստային անդամների ներգրավում:

Սահմանադրական արդարադատության ոլորտում առկա հիմնախնդիրների տևական ուսումնասիրությունը վկայում է, որ այս ոլորտի առաջնային հիմնախնդիրը կապված է դիմումատուների իրավագիտակցության ոչ բավարար մակարդակի և սահմանադրաիրավական հիմնախնդիրների լուծման կապակցությամբ ոչ ակտիվ կենսադիրք ունենալու, ինչպես նաև պետության ու հասարակության համար պահանջարկ ունեցող որոշ լիազորությունների չամրագրվածության հետ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել «սահմանադրական իրավունք», «համեմատական սահմանադրական իրավունք», «սահմանադրական վերահսկողություն», «իրավունքի փիլիսոփայություն», «սահմանադրական մշակույթ» դասընթացներում և հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև այն բոլոր դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է Սահմանադրության արժեքանական ընկալումներին ու առանձնահատկություններին, սահմանադրական արժեքներին, սահմանադրական արդարադատությանն ու սահմանադրականության հարցերին: Հիմնախնդրի առնչությամբ կատարված վերլուծությունը, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են նպաստել նաև ԼՂՀ Սահմանադրության, օրենսդրության ու սահմանադրական արդարադատության գործընթացի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնում, որտեղ էլ քննարկվել ու գրախոսվել է աշխատանքը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են Հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում, միջազգային գիտաժողովներին ներկայացված զեկույցներում և Արցախի պետական համալսարանում կարդացվող դասախոսություններում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 8 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության **առաջին գլուխը**, որը վերառված է «Սահմանադրական արժեքանության դերն ու նշանակությունը սահմանադրականության զարգացման գործում», բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Սահմանադրական արժեքանություն» *հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը* վերառությամբ, ուսումնասիրվել է «արժեք» հասկացության վերաբերյալ առկա բնորոշումները, որոնց հիման վրա Հեղինակը եզրահանգել է, որ արժեքները հասարակության մեջ գոյություն

ունեցող այն նշանակալի երևույթներն են, որոնք մարդու համար ունեն անփոխարինելի ու հիմնարար նշանակություն և կենսունակություն են ստանում մարդու կողմից համարժեք վերաբերմունք դրսևորվելու դեպքում:

Գրանից գատ, Հեղինակն առաջարկում է որոշակի հատկանիշներ, որոնց միջոցով հնարավոր է արժեքը տարբերել ոչ արժեքից: Իրավական արժեքները դասակարգելով ըստ բարձրագույնի, հիմնարարի (կամ համընդհանուրի), հատուկի (կամ ճյուղայինի), օժանդակողի (կամ նպաստողի) և բերելով դրանց օրինակները՝ Հեղինակը միաժամանակ քննադատության է ենթարկում պրոֆեսորներ Վ.Ժուկովի և Օ.Մարտիշինի այն տեսակետը, համաձայն որի՝ «պետությունը և իրավունքը հանդես են գալիս որպես բազային կամ առավել կարևոր ընդհանուր արժեքներ»³, որից հետո եզրակացնում է, որ առավել կարևոր արժեքներն առաջին հերթին մարդն է, նրա իրավունքներն ու ազատությունները, որոնք ճանաչվում են որպես բարձրագույն արժեք:

Հեղինակի կողմից փորձ է արվել տալ սահմանադրական արժեքանության սահմանումը, ըստ որի՝ *սահմանադրական արժեքանությունը գիտաճյուղ է, որը կոչված է բացահայտելու Սահմանադրության (կամ սահմանադրական օրենքների) մեջ բովանդակվող արժեքները և սահմանելու օրենսդրության մեջ ամրագրման ճանապարհով դրանք հասարակական պրակտիկայում և պետական քաղաքականության մակարդակում իրացնելու, մարդկանց կենսակերպի անբակտելի մասը դարձնելու կառուցակարգերը, ինչպես նաև այդ արժեքների իրացման միջոցով երկրում սահմանադրականություն հաստատելու ուղիները:*

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալումները» վերտառությամբ, Հեղինակը նշում է, որ ԼՂՀ Սահմանադրության ընկալումը և կիրառումը ոչ միայն պետության, այլև ամբողջությամբ վերցրած քաղաքացիների գործունեության առանցքն ու նպատակը պետք է հանդիսանա: Այս համատեքստում ընկալում ասելով պետք է հասկանալ Սահմանադրության մեջ բովանդակվող բոլոր դրույթների յուրացումը՝ անկախ դրա մակարդակից:

Այնուհետև Հեղինակն արձանագրում է, որ ԼՂՀ Սահմանադրության ընկալման հիմքերը դրվել են դեռևս դրա ընդունման նախօրեին կազմակերպված ու իրականացված բացատրական, քարոզչական աշխատանքների ժամանակ: Գրան նախորդել է տարբեր մակարդակների բազմաշերտ քննարկումները, որոնց մասնակցելու հնարավորություն են ունեցել ԼՂՀ քաղաքացիները:

ԼՂՀ Սահմանադրության ընկալունակության աստիճանը բարձրացնելու համար Հեղինակն առաջարկում է, որպեսզի ԼՂՀ հանրակրթական բոլոր դպրոցներում «Հասարակագիտություն» առարկայի կամ լրացուցիչ դասաժամի շրջանակներում ուսումնասիրվի ԼՂՀ Սահմանադրության վերաբերյալ նախնական նյութեր, իսկ ավելի բարձր դասարաններում՝ արդեն հնարավորինս ավելի խորությամբ:

Այնուհետև Հեղինակը հիմնավորում է, որ նախքան ԼՂՀ Սահմանադրության մեջ ամրագրվելը մի շարք արժեքներ տեղ են գտել «ԼՂՀ հռչակման մասին» և «ԼՂՀ պետական անկախության մասին» Հռչակագրերում, դրանցից հետո ընդունված սահմանադրական օրենքներում, որոնք 15 տարվա «փորձաշրջան» անցնելուց հետո իրենց «հանգրվանն» են գտել ԼՂՀ Սահմանադրության մեջ, ինչը վկայում է ոչ միայն դրանց անհրաժեշտության ու կենսունակության, այլև այն մասին, որ այդ արժեքները

³ Жуков В. Введение в юридическую аксиологию (вопросы методологии) // Государство и Право, 2009, №6, էջ 30; Мартышин О. Проблема ценностей в теории государства и права // Государство и Право, №10, 2004, էջ 14:

փոխառված չեն միջազգային հիմնարար փաստաթղթերից, այլ երկրների սահմանադրություններից ու տարիների ընթացքում դարձել են մարդկանց կենսակերպի անբաժանելի մասն ու իրավակարգավորիչ տարրը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «ԼՂՀ Սահմանադրության արժեքանակյան առանձնահատկությունների հիմնական բնութագրիչները» վերտառությամբ, Հեղինակը կատարել է ԼՂՀ Սահմանադրության բովանդակային և կառուցվածքային արժեքանակյան վերլուծություն՝ վերհանելով ԼՂՀ Սահմանադրության առանձնահատկությունները և դիտարկելով սահմանադրական արժեքների ձևակերպումները և՛ տեքստային, և՛ համատեքստային առումներով, նաև արտասահմանյան առանձին երկրների (այդ թվում՝ չճանաչված պետությունների) համեմատական վերլուծությամբ:

ԼՂՀ Սահմանադրության արժեքանակյան առանձնահատկություններից առաջինն այն է, որ Սահմանադրության հիմքում ընկած արժեքները ոչ թե ներմուծված են, այլ իրենց ամրագրումն են ստացել պետության կազմավորման առաջին իսկ տարիներին ընդունված Հռչակագրերում ու օրենքներում: Այս տեսանկյունից Հեղինակը չճանաչված երկրների անկախության հռչակման ու Սահմանադրությունների ընդունման հանգամանքների միջև տեսնում է հետևյալ արժեքանակյան օրինաչափությունը. հիշյալ երկրների մեծամասնությունը Սահմանադրությունն ընդունել է պետության հռչակման առաջին իսկ տարիներին ու ամրագրել այնպիսի սահմանադրական արժեքներ, որոնցով նախկինում չի ապրել կամ ընդհանրապես որևէ իրավական փաստաթղթում ամրագրված չի եղել, իսկ ԼՂՀ-ի պարագայում հարցին մոտեցել են այլ տեսանկյունից. սահմանադրական արժեքները սկզբից ամրագրվել են օրենքներում, որոնք տարիների ընթացքում ապացուցել են իրենց կենսունակությունը, որից հետո նոր տեղ են գտել ԼՂՀ Սահմանադրության մեջ:

Պարագրաֆի վերջում Հեղինակը ներկայացնում է Հավելված 1-ը, որով ԼՂՀ Սահմանադրությունը մի կողմից համեմատվում է հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված, իսկ մյուս կողմից ԼՂՀ-ին սահմանակից պետությունների Սահմանադրությունների հետ: Համեմատության չափանիշներն ընտրելիս (որոնք սպառիչ չեն, այլ ընդհանուրի մի մասն են կազմում) հիմք են ընդունվել Սահմանադրության այն հատկանիշները, որոնք իրենցից արժեքանակյան հետաքրքրություն են ներկայացնում:

Ատենախոսության **երկրորդ գլուխը**, որը վերտառված է **«Սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացումը ԼՂՀ սահմանադրական լուծումներում»**, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Իրավունքի գերակայությունը որպես սահմանադրական արժեք» վերտառությամբ, վերլուծելով սահմանադրական ու օրենսդրական հարթություններում իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրվածության հարցը, Հեղինակը գալիս է այն հետևության, որ եթե ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման առումով գոնե կիսալուծում առկա է, այսինքն այն ենթադրելի է որոշ հոդվածների վերլուծությունից, ապա նույնը չենք կարող ասել օրենսդրության առումով, որտեղ որպես սկզբունք նշված է օրենքի գերակայությունը: Այս առումով իրավունքի գերակայության վերաբերյալ միանշանակ մոտեցում և պատկերացում ձևավորելու նպատակով առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայությունն ամրագրել բառացիորեն, սահմանել դրա իրացման կառուցակարգերը, օրենսդրության մեջ տալ

դրա բնորոշումը և սահմանել որպես սկզբունք, իսկ գործադիր իշխանության կողմից մշակել և ընդունել դրա իրացման գործնական հայեցակարգ:

Ամփոփելով սահմանադրական արժեքանության դիրքերից իրավունքի գերակայության վերաբերյալ դատողությունները՝ Հեղինակը եզրահանգում է, որ այն որպես սահմանադրական արժեք իրենից ներկայացնում է Աստծո կողմից տրված բնական իրավունքի առաջնայնություն պետության սահմաններում, որը ենթադրում է նաև օրենքների համապատասխանություն վերջինիս բովանդակության հետ, անհատի և հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանների սահմանափակվածություն իրավունքով, որն էլ նպաստում է «անհատ-հասարակություն-պետություն» շղթայի ամեն մի բաղադրիչի հավասարակշռության ապահովմանն ու համաչափ զարգացմանը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Ժողովրդաիշխանությունը որպես ժամանակակից պետությունների կազմակերպման հիմնարար սկզբունք» վերտառությամբ, հիմնավորվում է, որ հիշյալ սկզբունքը պետության կազմավորման օրվանից ամրագրվել է հիմնարար փաստաթղթերում ու օրենքներում, որի արդյունքը մի շարք համապետական ու այլ մակարդակների հանրաքվեների և ընտրությունների անցկացումն է: Այնուհետև Հեղինակն առաջարկում է ԼՂՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի ու 133, 134 և 135 հոդվածների առաջին մասերի միջև առկա ներսահմանադրական հակասությունը հաղթահարելու նպատակով ԼՂՀ-ում ներդնել ժողովրդական նախաձեռնությամբ հանրաքվե անցկացնելու հնարավորություն և այդ իրավունքի իրացման համար սահմանել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 10 տոկոսից ոչ պակասի ստորագրությունների առկայության պահանջ:

Այնուհետև նշվում է, որ ԼՂՀ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների և օրենսդրական հանրաքվեի նախաձեռնության իրավունքով օժտված սուբյեկտների կազմը ներդաշնակեցնելու նպատակով Հանրապետության Նախագահին ևս պետք է օժտել օրենսդրական հանրաքվե նախաձեռնելու իրավունքով:

Հաշվի առնելով տեղական հանրաքվեին տրված բնորոշման ոչ հստակ ու ամբողջական լինելը և սահմանման մեջ օգտագործված որոշ բառակապակցությունների առումով հստակություն մտցնելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ: Դրանից բացի, Հեղինակն առաջարկում է նույն Օրենքի 5-րդ հոդվածում հստակորեն նշել այն հարցերի շրջանակը, որոնք կարող են դրվել տեղական հանրաքվեի:

Այնուհետև Հեղինակի կողմից առաջարկվում է նաև ընդլայնել տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ինչպես նաև ԼՂՀ-ում ներդնել քաղաքացիների ժողովի ինստիտուտը, որի շնորհիվ հնարավոր կլինի տեղական նշանակության հրատապ հարցերին սեղմ ժամկետներում տալ լուծում և ավելի ակտիվացնել համայնքի ղեկավարի և ավագանու գործունեությունը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Իշխանությունների տարանջատումը ԼՂՀ սահմանադրական լուծումներում» վերտառությամբ, անդրադարձ է կատարվում իշխանությունների տարանջատման համակարգում ԼՂՀ Նախագահի տեղի ու դերի հարցին: Այնուհետև նշվում է, որ Սահմանադրության 61 հոդվածի 2-րդ մասով ամրագրված Նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու և օրենսդիր,

գործադիր ու դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ԼՂՀ Նախագահի աշխատակազմում կամ Նախագահին առընթեր ստեղծել մասնագիտացված ստորաբաժանում, որն էլ կապահովի Նախագահի՝ տվյալ ոլորտում գործունեության անխաթար իրականացումը, ինչպես նաև երկրում սահմանադրականության վիճակի մշտադիտարկումը:

Հեղինակն անդրադառնում է նաև իշխանության ամեն մի թևի գործունեության հետ կապված հարցերին՝ այդ համատեքստում առաջարկելով փոփոխություն կատարել ԼՂՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին մասի 1.5 կետում, որով Սահմանադրությամբ Նախագահին լիազորություն կվերապահվի հաղթահարելու այն արգելքը, որն առաջանում է վարչապետի թեկնածությունն Ազգային ժողովի կողմից երկու անգամ մերժվելու դեպքում:

Այնուհետև Հեղինակը քննարկում է Ազգային ժողովի կողմից Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունելուց հետո վարչապետի կողմից Հանրապետության Նախագահին Կառավարության հրաժարականի մասին դիմումի ներկայացման գործընթացի թերի կանոնակարգվածության հարցը, ինչի առնչությամբ առաջարկվում է Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ:

Քննարկելով ԼՂՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգի արդյունավետության բարձրացման հարցը՝ Հեղինակն առաջարկում է, որպեսզի ԼՂՀ պետական բյուջեով նախատեսված ծախսերի իրականացման արդյունքում յուրաքանչյուր եռամսյակը մեկ կառավարությունը հիմնավորված (փաստաթղթավորված) հաշվետվություն ներկայացնի Ազգային ժողով: Ընդ որում, Կառավարության կողմից տարվա ընթացքում 2 անգամ բյուջեի կատարողականը խախտումներով ներկայացնելը պետք է դառնա նրա հրաժարականի հիմք ու ամրագրվի Սահմանադրության և «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրենքի մեջ:

Ատենախոսության **երրորդ գլուխը**, որը վերտառված է «**Սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները ԼՂՀ-ում**», բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «*ԼՂՀ Սահմանադրության, առկա իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի հակասությունների հաղթահարման ուղիները*» վերտառությամբ, քննության առարկա է դարձել ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատի կողմից կայացված որոշումներում երկու սահմանադրական արժեքների՝ իրավունքի գերակայության և տեղական ինքնակառավարման իրացման հետ կապված հարցը, որից հետո Հեղինակը եզրահանգել է, որ ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության պրակտիկան չունի հարուստ փորձ, դեռևս ձևավորման փուլում է և դժվար է ասել, թե որքանով են սահմանադրական արդարադատության տեսանկյունից կենսունակ սահմանադրական արժեքները: Եվ քանի որ քննարկման առարկա դարձած սահմանադրական արժեքներն իրավակիրառական պրակտիկայում չեն մարմնավորվել, ուստի հակասությունների հաղթահարման գործում ունեցած դերակատարության մասին նույնպես խոսք լինել չի կարող:

Հեղինակն առաջարկում է, որպեսզի ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատն ամեն տարի ընդունի հաղորդում երկրում սահմանադրական

արդարադատության վիճակի մասին և այն քննարկի ԼՂՀ Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորների հետ՝ որպես ԼՂՀ Գերագույն դատարանի կազմը ձևավորող մարմիններ:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Սահմանադրական արդարադատության համակարգի հետագա զարգացման հիմնախնդիրները» վերտառությամբ, Հեղինակն անդրադառնում է ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության ինստիտուտի ձևավորման ու կայացման նախադրյալներին, ինչպես նաև առկա հիմնախնդիրներին:

Վերլուծության ենթարկելով դատական սահմանադրական վերահսկողության մոդելի հարցը՝ Հեղինակը եզրահանգում է, որ ԼՂՀ-ում որդեգրվել է սահմանադրական վերահսկողության խառը (հիբրիդային) ձևը, որն իր մեջ պարունակում է եվրոպական ու ամերիկյան մոդելների տարրեր: Այնուհետև Հեղինակը ԼՂՀ Սահմանադրության 6-րդ գլխի վերլուծության արդյունքում փաստում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը նույն կազմով երկակի գործառույթ է իրականացնում. մի կողմից սահմանադրական արդարադատություն, իսկ մյուս կողմից վճռաբեկության կարգով վերանայում է ստորադաս ատյանների դատական ակտերը:

Անդրադառնալով սահմանադրական արդարադատության գործունակությանը խոչընդոտող հիմնահարցին՝ Հեղինակը նշում է, որ դրանց շարքին կարելի է դասել ինչպես դիմումատուների իրավագիտակցության ոչ բավարար մակարդակը, քաղաքացիների մի մասի պասիվ կենսադիրքը, այնպես էլ ԼՂՀ Սահմանադրության 114 հոդվածի 1-ին մասում ամրագրված մի քանի ոչ կիրառական լիազորությունների առկայությունը: Ամփոփելով լիազորությունների հետ կապված հարցը՝ Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ ԼՂՀ-ի պարագայում ավելի կիրառական կլինեին, օրինակ, Սահմանադրությունը մեկնաբանելու իրավասությամբ օժտելը, որը կխթաներ երկրում սահմանադրական իրավագիտակցության ու իրավական համակարգի ընկալունակության աստիճանի բարձրացմանը:

Եզրակացությունում ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու Հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման առնչությամբ ներկայացված առաջարկությունները, որոնք ամփոփ ձևով հանգում են հետևյալին.

1. Հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը և երկրում սահմանադրականության հաստատմանը զուգընթաց առանձնակի կարևորություն է ստանում սահմանադրական արժեքանությունը: Մեր կարիքով՝ **«սահմանադրական արժեքանությունը գիտաճյուղ է, որը կոչված է բացահայտելու Սահմանադրության (կամ սահմանադրական օրենքների) մեջ բովանդակվող արժեքները և սահմանելու օրենսդրության մեջ ամրագրման ճանապարհով դրանք հասարակական պրակտիկայում և պետական քաղաքականության մակարդակում իրացնելու, մարդկանց կենսակերպի անքակտելի մասը դարձնելու կառուցակարգերը, ինչպես նաև այդ արժեքների իրացման միջոցով երկրում սահմանադրականություն հաստատելու ուղիները»:** Ինչ վերաբերում է սահմանադրական արժեքանության օբյեկտին, ապա այն Սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքներն ու արժեքներն են: Սահմանադրական արժեքանության սուբյեկտի կարգավիճակում հանդես է գալիս պետությունը՝ ի դեմս իշխանության տարբեր մարմինների, ինչպես նաև քաղաքացիները:

2. ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկություններից առաջինն այն է, որ Սահմանադրության հիմքում ընկած արժեքները ոչ թե ներմուծված են, այլ ամրագրվել են պետության կազմավորման առաջին իսկ տարիներին ընդունված Հռչակագրերում և օրենքներում:

Չճանաչված պետությունների սահմանադրական իրավակարգավորումների համեմատությունը թույլ է տվել վեր հանել ԼՂՀ Սահմանադրության արժեքանական մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես՝

– չնայած չճանաչվածության հանգամանքին, ԼՂՀ-ն իր որդեգրած արժեհամակարգով չի զիջում ոչ միայն չճանաչված, այլև միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ հանդիսացող պետություններին,

– ԼՂՀ Սահմանադրության մակարդակով պետությունը պատրաստակամություն է հայտնել և պարտավորություն ստանձնել հետևելու միջազգային պայմանագրերին ու միջազգային իրավունքի նորմերին, չնայած այն բանին, որ դեռևս միջազգայնորեն ճանաչված չէ: Ընդ որում, ԼՂՀ-ն արդեն միացել է մի շարք միջազգային փաստաթղթերի և կամավոր ճանաչել դրանց իրավագործությունը երկրի տարածքում,

– հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված երկրներից ԼՂՀ-ն միակն է, որն իրեն հռչակել է որպես սոցիալական պետություն, երաշխավորում է կյանքի իրավունքը և միանշանակորեն վերացված է մահապատիժը,

– Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը մյուս չճանաչված երկրներից տարբերվում է նաև նրանով, որ Սահմանադրության մեջ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները հռչակվել են որպես բարձրագույն արժեք (համանման դրույթ կարելի է հանդիպել նաև Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության Սահմանադրության մեջ),

– չնայած այն հանգամանքին, որ քննարկվող չճանաչված երկրներից առաջինն անկախություն հռչակել ու Սահմանադրություն է ընդունել Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը, այնուհանդերձ, արժեքանական ծանրաբեռնվածությամբ աչքի է ընկնում ԼՂՀ Սահմանադրությունը, իսկ վերջինիս հիման վրա երկրում իրականացվող ժողովրդավարական գործընթացները, հատկապես տարբեր մակարդակների ընտրություններն ու հանրաքվեներն արժանանում են միջազգային դիտորդների բարձր գնահատականին և համարվում օրինակելի, այսինքն՝ սահմանադրական արժեքները (մասնավորապես ընտրական գործընթացներին առնչվող) ԼՂՀ-ում ոչ թե հռչակագրային բնույթ են կրում, այլ ապրող իրողություն են:

3. Իրավունքի գերակայության վերաբերյալ միանշանակ մոտեցում և պատկերացում ձևավորելու նպատակով և հաշվի առնելով այն, որ վերջինս ամրագրված չէ ԼՂՀ Հիմնական օրենքում՝ առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայությունն ամրագրել բառացիորեն, ինչպես դա արտացոլված է բազմաթիվ երկրների սահմանադրություններում, սահմանել դրա իրացման կառուցակարգերը, օրենսդրության մեջ տալ դրա բնորոշումը և սահմանել որպես սկզբունք, իսկ գործադիր իշխանության կողմից մշակել և ընդունել դրա իրացման գործնական հայեցակարգ: Անհրաժեշտ է նաև գործնական քայլեր իրականացնել իրավունքի գերակայության էության համարժեք ընկալման, այն անձի սոցիալական վարքագիծը մասը դարձնելու, դրա հետ միաժամանակ իրավագիտակցության պատշաճ մակարդակ ապահովելու ուղղությամբ:

4. ԼՂՀ Սահմանադրության 1-ին գլխի մեջ ամրագրված՝ ժողովրդի կողմից իր իշխանությունը հանրաքվեների եղանակով իրականացնելու պահանջի նկատմամբ հետևողականություն դրսևորելու և Հիմնական օրենքի 11-րդ գլխում արտացոլելու նպատակով առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության մեջ կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ սահմանադրական, օրենսդրական ու պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերով հանրաքվեների սուբյեկտ ճանաչել ժողովրդին՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 10 տոկոսից ոչ պակասի ստորագրությունների առկայության պահանջով, իսկ օրենսդրական հանրաքվեի սուբյեկտների շարքին դասել նաև Նախագահին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա օրենսդիր մարմնում օժտված է օրենսդրական նախաձեռնության իրավունքով:

5. Տեղական հանրաքվեի բնորոշումը հստակեցնելու և առավել ամբողջական դարձնելու նպատակով առաջարկվում է «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տեղական հանրաքվեն ԼՂՀ Սահմանադրությանը և տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությանը համապատասխան տվյալ համայնքի վարչական սահմաններում մշտապես կամ առավելապես բնակվող և ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների կողմից համայնքային նշանակության կարևոր հարցերով քվեարկությունն է:

2. Սույն օրենքի իմաստով «կարևոր հարցերի» տակ հասկացվում է այն հարցերի շրջանակը, առանց որոնց լուծման հնարավոր չէ տվյալ համայնքի բնակիչների բնականոն ու զարգացմանն ուղղված կենսագործունեությունը»:

Տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեցող անձանց շրջանակն ընդլայնելու անհրաժեշտությունից ելնելով պետք է օրենսդրությամբ հասարակական միավորումներին նույնպես վերապահել նման իրավունք, ինչպես նաև ԼՂՀ-ում ներդնել քաղաքացիների ժողովի ինստիտուտը:

Հաշվի առնելով ԼՂՀ Սահմանադրության 32 հոդվածի 1-ին մասի ոչ լիարժեք իրավակարգավորումը՝ առաջարկվում է այն շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն հանրաքվեներին մասնակցելու և ընտրելու իրավունք: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրվելու և անմիջականորեն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք»:

6. ԼՂՀ Սահմանադրության 61 հոդվածի 3-րդ մասով ամրագրված Նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու և օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների բնականոն գործունեությունն արհեստավարժորեն ապահովելու նպատակով առաջարկվում է ԼՂՀ Նախագահի աշխատակազմում կամ Նախագահին առընթեր ստեղծել մասնագիտացված ստորաբաժանում, որի հիմնական գործունեությունը կհանդիսանա Նախագահի կողմից Սահմանադրության հետևման և իշխանության երեք թևերի բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ գիտականորեն հիմնավորված և արհեստավարժորեն իրականացվելիք գործողությունների հիմնավորվածությունը ԼՂՀ Նախագահին ներկայացնելն ու դրանց ընթացքին հետևելը: Նման ստորաբաժանման առկայությունը Նախագահին

հնարավորություն կտա նաև Սահմանադրության պահպանման շրջանակներում իրականացնել երկրում սահմանադրականության վիճակի մշտադիտարկում:

7. Երկրում քաղաքական կայունության ու ժողովրդավարության հիմքերի ամրապնդման նպատակով առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին մասի 1.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «սույն հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետով սահմանված կարգով Ազգային ժողովի կողմից վարչապետի թեկնածության առնչությամբ երկու անգամ համաձայնություն չտալու կամ Ազգային ժողովի կողմից վարչապետի թեկնածությանը համաձայնություն չտալուց հետո Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալու կամ Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալուց հետո ներկայացված վարչապետի թեկնածությանը համաձայնություն չտալու դեպքերում Հանրապետության Նախագահը տասնօրյա ժամկետում նշանակում է վարչապետ, կազմավորում Կառավարություն և արձակում Ազգային ժողովը»:

Առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունվելու դեպքում վարչապետը նույն օրը Հանրապետության Նախագահին դիմում է ներկայացնում Կառավարության հրաժարականի մասին: Նշված դիմումի քննարկումից հետո Հանրապետության Նախագահն իրավունք ունի հայտարարել Կառավարության հրաժարականի մասին կամ չհամաձայնվել Ազգային ժողովի որոշման հետ: Եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ անվստահություն է հայտնում Կառավարությանը վերջինիս ծրագրին հավանություն չտալու տեսքով, ապա Նախագահը հայտարարում է Կառավարության հրաժարականի մասին կամ արձակում է Ազգային ժողովը»:

Առաջարկվում է նաև օրենսդրական նախաձեռնության իրավունք վերապահել Գերագույն դատարանին՝ իր իրավասությանը վերաբերող հարցերով և այս լրացումն ամրագրել ԼՂՀ Սահմանադրության 90 հոդվածի 1-ին մասում:

8. ԼՂՀ Գերագույն դատարանի կայացրած որոշումների ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության պրակտիկան չունի հարուստ փորձ, դեռևս ձևավորման փուլում է և դժվար է ասել, թե որքանով են կենսունակ սահմանադրական արժեքները: Դրանից բացի, եթե իրավակիրառական պրակտիկայում սահմանադրական արժեքները խորը վերլուծության առարկա չեն դարձել, այդ արժեքներից ոչ բոլորն են ընկած եղել որոշումների կայացման հիմքում, ապա չենք կարող ասել՝ Գերագույն դատարանը շիտակ ձևով է այն մեկնաբանել, թե՛ ոչ:

9. Քանի որ ատենախոսության 2-րդ գլխում քննարման առարկա դարձած սահմանադրական արժեքներն իրավակիրառական պրակտիկայում չեն մարմնավորվել, ուստի հակասությունների հաղթահարման գործում ունեցած դերակատարության մասին նույնպես խոսք լինել չի կարող: Սակայն պետք է նկատի առնել, որ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի ցանկացած որոշում իր դրական ազդեցությունը պետք է թողնի հասարակության զարգացման վրա: Այստեղից էլ կարելի է հետևություն անել, որ Գերագույն դատարանի ընդունած որոշման որակն ուղիղ

համեմատական է պետության և հասարակության կյանքում արձանագրված տեղաշարժերին:

10. ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության ներկայիս «լճացման գործընթացը» պայմանավորված է այնպիսի հիմնախնդիրների հետ, ինչպիսիք են դատական սահմանադրական վերահսկողության մոդելի առանձին տարրերի ոչ ճիշտ ընտրությունը, դիմումատուների իրավագիտակցության ոչ բավարար մակարդակը և սահմանադրաիրավական հիմնախնդիրների լուծման կապակցությամբ ոչ ակտիվ կենսադիրք ունենալը, ինչպես նաև ԼՂՀ Սահմանադրության 114 հոդվածի 1-ին մասում ամրագրված լիազորությունների մեջ Սահմանադրությունը մեկնաբանելու լիազորության բացակայությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Սահմանադրական արժեքանություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը // Սահմանադրական դատարանի տեղեկագիր, № 2 (68) 2013, Երևան, էջեր 22-30

2. ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալումները որպես երկրում սահմանադրականության հաստատման կարևորագույն նախասկիզբ // Գատական իշխանություն, № 6 (167), 2013, Երևան, էջեր 6-15

3. Аксиологические особенности Конституции Нагорно-Карабахской Республики (Республики Арцах) // Конституционное и муниципальное право, выпуск 10, Октябрь, 2014, Москва, էջեր 64-68

4. Սահմանադրական արդարադատության համակարգի հետագա զարգացման հիմնախնդիրները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Սահմանադրական դատարանի տեղեկագիր, № 1(75) 2015, Երևան, էջեր 5-15

5. Իշխանությունների տարանջատումը որպես սահմանադրական արժեք (ԼՂՀ օրինակով), Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, №1, 2015, Ստեփանակերտ, էջեր 77-86 (Ս.Պետիկյանի համահեղինակությամբ)

6. Հանրաքվեի ինստիտուտի կատարելագործման հիմնական ուղղությունները ԼՂՀ-ում // Օրինականություն, № 89, 2015, Երևան, էջեր 42-45:

АРУТЮНЯН АВЕТИК ГАМЛЕТОВИЧ

АКСИОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КОНСТИТУЦИИ НКР И ПРОБЛЕМЫ ДАЛЬНЕЙШЕГО РАЗВИТИЯ КОНСТИТУЦИОНАЛИЗМА

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблеме выявления аксиологических восприятий и особенностей Конституции Нагорно-Карабахской Республики (далее по тексту - НКР), равно как и роли конституционных ценностей в деле утверждения в стране конституционализма.

Данное диссертационное исследование является первым после принятия 10 декабря 2006 года Конституции Нагорно-Карабахской Республики комплексным исследованием, в котором выявлены аксиологические особенности Конституции НКР, место и роль основополагающих конституционных ценностей в осуществлении конституционного правосудия и установлении конституционализма в пока ещё не признанной со стороны международного сообщества стране. Впервые предметом научного исследования стала проблема закрепления и реализации конституционных ценностей в законодательстве НКР.

В работе Автором выявляются сущность, объект, субъект и предмет конституционной аксиологии. Автор характеризует конституционную аксиологию как отрасль права, которая призвана выявить содержащиеся в Конституции (или в конституционных законах) ценности и установить механизмы реализации этих ценностей в правоприменительной практике путём закрепления в законодательстве, превращения в неотъемлемую часть образа жизни людей, равно как и пути утверждения посредством реализации этих ценностей конституционализма в стране.

Автор обосновывает, что среди аксиологических особенностей Конституции НКР первой является то, что ценности, лежащие в основе Конституции, не привнесены извне, а, исходя из воли народа, получили своё закрепление в Декларации “О провозглашении Нагорно-Карабахской Республики” от 02.09.1991г., Декларации “О государственной независимости Нагорно-Карабахской Республики” от 06.01.1992г. и законах, принятых в первые годы формирования государства. Автор сравнивает Конституцию НКР с Конституциями непризнанных и соседних стран и выявляет аксиологические черты, по которым Основной закон НКР отличается от Конституций рассматриваемых стран.

Автор анализирует вопрос зафиксированности в Конституции и законодательстве НКР верховенства права, после чего приходит к выводу, что если в плане закрепления в Конституции НКР принципа верховенства права есть хотя бы полурешение, что можно предположить из анализа некоторых статей, то аналогичное нельзя сказать в отношении законодательства, где в качестве принципа отмечено верховенство закона. В этой связи Автором делаются конкретные предложения.

Автор подчёркивает, что между частью 2-ой статьи 3-ей и первыми частями статей 133, 134 и 135 Конституции НКР имеется внутриконтитуционное противоречие, для преодоления которого необходимо внедрить в НКР возможность проведения референдума по народной инициативе и установить для осуществления этого требование наличия не менее 10-и процентов подписей от общего числа лиц, имеющих право голосовать на референдуме.

Автор обосновывает необходимость расширения круга субъектов, имеющих право инициирования местного референдума, также как и внедрения института собрания граждан НКР, благодаря которому станет возможным дать в сжатые сроки решение актуальным вопросам местного значения и ещё больше активизировать деятельность руководителя общины и старейшин.

Автор раскрывает вопрос о месте и роли Президента НКР в системе разделения властей. В диссертации отмечается, что с целью обеспечения закрепленного частью 2-ой статьи 61-ой Конституции НКР за Президентом соблюдения Конституции и нормального функционирования законодательной, исполнительной и судебной властей необходимо создать в Аппарате Президента НКР или при Президенте НКР специализированное подразделение, призванное обеспечить осуществление бесперебойной деятельности Президента в данной сфере, также как и постоянный мониторинг состояния конституционализма в стране.

Исследуя проблему, связанную с реализацией двух конституционных ценностей – верховенства права и местного самоуправления, зафиксированных в принятых со стороны конституционной палаты Верховного суда НКР решениях, Автор приходит к выводу о том, что в НКР практика конституционного правосудия не имеет богатого опыта, находится пока на стадии формирования и трудно ещё сказать, насколько жизнеспособны конституционные ценности с точки зрения конституционного правосудия.

Автор обращается к предпосылкам формирования и становления института конституционного правосудия в НКР. Остановившись на проблемах, препятствующих дееспособности конституционного правосудия, Автор отмечает, что к их ряду можно отнести как недостаточный уровень правосознания заявителей, пассивную жизненную позицию части граждан, так и наличие в части 1-ой статьи 114-ой Конституции НКР нескольких полномочий, которые не используются на практике.

Обобщая вопрос, связанный с полномочиями конституционной палаты, Автор приходит к выводу, что в случае с НКР более практичным, например, было бы наделение полномочием официально толковать Конституцию, что стимулировало бы повышение уровня конституционного правосознания в НКР и способности воспринимать правовую систему.

Изучив затронутые в диссертационном исследовании проблемы, Автор делает не только теоретические выводы, но и представляет ряд практических рекомендаций для совершенствования Конституции, законодательства и правоприменительной практики Нагорно-Карабахской Республики.

AVETIK HARUTYUNYAN

**AXIOLOGICAL DISTINCTIONS OF THE NKR CONSTITUTION AND ISSUES OF
FURTHER DEVELOPMENT OF CONSTITUTIONALISM**

SUMMARY

The dissertation is devoted to the issue of bringing to light the axiological perceptions and distinctions of the Constitution of Nagorno Karabakh Republic (hereinafter referred to as the NKR), as well as the role of constitutional values in the process of establishment of Constitutionalism in the country.

The dissertation under investigation is the first comprehensive study after the adoption of the Nagorno Karabakh Republic Constitution on 10 December 2006, which sheds light on the axiological distinctions of the NKR Constitution, place and role of fundamental constitutional values in administering constitutional justice and the establishment of Constitutionalism in a country still unrecognized by the international community.

For the first time the issue of consolidation and realization of constitutional values in the NKR Legislation has become subject to scientific research.

The Author of the work reveals the essence, object, subject and subject matter of *constitutional axiology* by characterizing it as a branch of law which is called upon bringing to light values encompassing the Constitution (or constitutional laws) and establishing the mechanisms of implementation of those values in the law enforcement practice by force of consolidation in the legislature, turning into an integral part of people's way of life, as well as means of establishing Constitutionalism in the country through the implementation of those values.

The Author substantiates that the first among axiological distinctions of the NKR Constitution is that values underlying the Constitution which are not introduced from without, but based upon popular will are formalized in the Declaration "On the Proclamation of the Nagorno Karabakh Republic" dated September 2, 1991 and laws passed during the early years of state formation. The Author draws parallels between the NKR Constitution and constitutions of adjacent unrecognized countries and reveals axiological features which distinguish the NKR Constitutional Law among constitutions of countries under consideration.

The Author analyzes the issue of formalizing the supremacy of law in the NKR Constitution and Legislation and arrives at the conclusion that if there is any compromise decision in terms of formalizing the principle of supremacy of law in the NKR Constitution, which can be inferred from the analysis of several articles, it would be unjustified to note the same with regard to Legislation where supremacy of law is indicated by way of principle. In this connection the Author makes concrete proposals.

The Author underlines that there is some interconstitutional discrepancy between Section 2 of Article 3 and Section 1 of Articles 133, 134 and 135 of the NKR Constitution the

overcoming of which requires incorporating the opportunity of holding a referendum on popular initiative and specifying the requirement of the availability of no less than 10% from the required number of voters' signatures for its implementation.

The Author substantiates the need of expanding the circle of subjects vested with the right of initiating a local referendum as well as introducing the institute of folk moot of the NKR, which would enable the settlement of topical issues of local significance in the shortest possible time and stimulate the activity of community leaders and seniors.

The Author uncovers the issue on the place and role of the NKR President in the system of division of powers. It is outlined in the dissertation that with the aim of ensuring adherence to the Constitution and regular functioning of the legislative, executive and legal powers as assigned to the President in Section 2 of Article 61 of the NKR Constitution it is imperative to establish a task group within NKR President's Office or under the NKR President aimed at securing the implementation of the President's uninterrupted activity in the designated sphere, as well as an ongoing monitoring of the status of Constitutionalism in the country.

Investigating the problem related to the realization of two constitutional values-the rule of law and local self-government, formalized in the resolutions passed by the Constitutional Chamber of the NKR Supreme Court, the Author arrives to the conclusion that the practice of constitutional justice in the NKR does not have rich experience, is in its formative stage and one faces challenges in stating how viable the constitutional values are from the viewpoint of constitutional justice.

The Author addresses the legal prerequisites of formation and establishment of the institute of constitutional justice in the NKR. Dwelling upon the issues of obstructing legal capacity of constitutional justice, the Author notes that applicant parties' legal awareness shortfall, passive approach to life among part of people, as well as availability of several enforcement powers in Section 1 of Article 114 of the NKR Constitution non-applicable in practice could be attributed to them.

Generalizing the issue connected with enforcement powers of the Constitutional Chamber, the Author arrives at the conclusion that with regard to the NKR it would have been more practical, for instance, to invest with authority to officially interpret the Constitution which would have stimulated rise of the level of constitutional legal consciousness in the NKR and capabilities to perceive legal framing.

Studying the issues touched upon in the dissertation research the Author draws not only theoretical conclusions but offers a range of practical recommendations for the refinement of the Constitution, Legislation and law enforcement practice of the Nagorno Karabakh Republic.